



Բ. Կ Ո Չ Ո Ի Ն Ք

Այս հանդիսական ճաշը շատ տարբեր էր սովորականներէն՝ անուամբ, ձեւով, ճութութեամբ, կերողաց թուով, եւ ամէն բանով, զոր պէտք է որ մեծ խնամով հետազօտենք. վասն զի՝ աւելորդ է ըսել՝ մեր ուսումնասիրութեան նշանաւորագոյն մասերէն մին է այս:

1. — Կարեւորութիւնը: — Ահագին էր կոչնոց դերը մեր անցեալ պատմութեան մէջ, մանաւանդ Արշակունեաց շրջանին: Հայ կենաց բոլոր պարագայից մէջ խառնուած էր այն: Հոն էր՝ որ առաւելապէս կը սոնքար ու կը շողշողար հայ աւագորեալն՝ իւր ազնուապետական դասակարգութեան ցուցադրութեամբ արքունի սեղանին շուրջ (Փաւս. 66-7. Մեսր. 32-9). եւ որուն ուրիշ ոչ մէկ առթիւ այնչափ ուշ չեն դարձներ մեր պատմիչք: Կոչնոց մէջ կը լինէին սիրոյ եւ պատուոյ մեծամեծ ցոյցերը՝ թագապսակ գլուխներու (Փաւս. 124) եւ առ հասարակ այլոց միջեւ (Եղիշ. 132-3): Հացկերութեանց ձեւով քաղաքական պետեր իրենց կուսակցաց